

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի կապակցությամբ

Սիրելի՛ սյունեցիներ

Շնորհավորում եմ ձեզ Անկախության տոնի առիթով: Տոն, որը հպարտությամբ է լցնում յուրաքանչյուր հայի հոգին ու գիտակցությունը և մեզանից յուրաքանչյուրի պայքարի ու նվիրումի արդյունքն է: Այս տոնի կարևորությունն ըմբռնելու համար բավական է հիշել, թե երբ է վերջին անգամ հայոց հողի վրա եղել 24-ամյա անկախություն ու խաղաղություն:

Հայ ժողովուրդն ի լուր աշխարհի բարձրաձայնեց՝ այո, ես տեր եմ իմ պատմական ժառանգությանն ու ազգային ինքնությանը, իմ նախնիների թափած արյանը, պատմական հայրենիքին, դրոշին ու պետականությանը: Մեր ժողովուրդը դժվարությունների, մաքառումների և արյան գնով աշխարհին ապացուցեց, որ կարող է ապրել ազատ ու անկախ, կարող է պաշտպանել անկախ ապրելու իր սրբազան իրավունքը:

Մեր անկախության ուղին սկզբնավորվեց արցախյան պայքարով: Մի ողջ ժողովուրդ մարտի դաշտում հերոսաբար մաքառեց և դժվարին պատմական ժամանակաշրջանում ստեղծեց պետականություն ու բանակ:

Դարակազմիկ պատմական բոլոր գործընթացների ժամանակ Սյունիքի և սյունեցու համար անկախ պետականության վերականգնումը համարվել է գերագույն նպատակ: Ահա թե ինչու սյունյաց լեռնաշխարհի անկախ ու ինքնիշխան ժողովուրդն անձնվիրաբար ձեռնամուխ եղավ հանուն պետականության մղվող ազատագրական պայքարին: Սյունեցիները անվերապահորեն հավատում են Հայաստանի հավերժական ազատությանն ու պետական անկախությանը և պատրաստ են պաշտպանելու մեծագույն նվաճումը՝ անկախությունը:

Կրկին շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման տարեդարձի կապակցությամբ, մաղթում՝ խաղաղություն և հաջողություններ՝ ի բարօրություն մեր երկրի:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Ս. Խաչատրյան

19.09.2015